



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽԱՆԱԲԱՐԱՆ
ՆՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ հրատարակչության անցած ուղին սերտորեն կապված է Մայր բուհի իննսունամյա գործունեությանը, որի ընթացքում հրատարակել է ավելի քան 5500 անուն գիրք:

Նոր էր հիմնվել Հայաստանի առաջին Հանրապետությունը, 1918թ. հոկտեմբերին Թիֆլիսում հրավիրվում է հատուկ խորհրդակցություն՝ Հայաստանում համալսարանական տիպի դպրոց հիմնելու մասին: Քննարկմանը մասնակցել են ապագա համալսարանի առաջին ռեկտոր՝ Սանկտ Պետերբուրգում, Փարիզում, Բյուսելում իրավագիտություն ուսանած, նաև դասավանդած Յուրի Ղամբարյանը, ՀՀ Հանրային կրթության նախարարի տեղակալ՝ Փարիզի և Սանկտ Պետերբուրգի համալսարանների շրջանավարտ Դավիթ Զավրյանը, համալսարանական առաջին գրքի նախաձեռնող, Գևորգյան ճեմարանի երկարամյա մանկավարժ Սիրական Տիգրանյանը: Որոշման մեջ ասված է. «Ստեղծել դպրոց կամ դասընթացներ, որոնք կպատրաստեն մասնագետներ՝ վերջնական նպատակ ունենալով այն դարձնել համալսարան»:

1920թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում կայացավ համալսարանի բացումը: Արարողությունը շատ բարձր մակարդակով էր կազմակերպված: Մասնակցում էին վարչապետ Ալ. Խատիսյանը, Հանրապետության մյուս ղեկավարները, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իրանի և այլ երկրների դեսպանները:

Նույն օրը՝ 1920թ. հունվարի 31-ին, համալսարանը լույս ընծայեց առաջին թերթը՝ «Հայաստանի համալսարան» խորագրով՝ փաստորեն սկիզբ դնելով համալսարանական հրատարակչությանը:

Առաջին գիրքը ևս լույս է տեսել Ալեքսանդրապոլում: Սիրական Տիգրանյանը թարգմանել էր ամերիկացի նշանավոր փիլիսոփա Ուիլյամ Ջեյմսի «Հոգեբանություն» ուսումնամեթոդական ձեռնարկը, որից հետո տպագրվել է այդ առարկայի դասախոսությունը:

Շատ ուշագրավ է, թե ովքեր էին համալսարանական առաջին գրքերի հեղինակները և ինչպիսի սկիզբ է ունեցել ԵՊՀ հրատարակչական գործը:

Հովհաննես Նավակատիկյանը՝ «Դետերմինատոր» դասագրքի հեղինակը, Գերմանիայում կրթություն ստացած ֆիզիկոս էր, «Մարդակազմություն» դասագրքի հեղինակ Վահան Արծրունին Փարիզում կենսաբանական կրթություն էր ստացել, «Կաթնատնտեսություն» գրքի հեղինակ Սարգիս Աբովյանն ավարտել էր Լայպցիգի և Հալլեի համալսարանները, «Ձեռնարկ քանակական անալիզի» դասագիրքը գրել էր Բեռլինի և Սանկտ Պետերբուրգի համալսարաններն ավարտած քիմիկոս Սարգիս Ակունյանը: Առաջին հեղինակներից էին եվրոպական համալսարաններում

սովորած ագրոքիմիկոս, մանրէաբան Պապա Քալանթարյանը, բժիշկ Գ. Արեշյանը, քիմիկոս Լևոն Ռոտինյանը, ֆիզիկոս Հ. Անժուրը: Եթե այս անուններին ավելացնենք նշանավոր հայագետներ Հրայր Աճառյանին, Մանուկ Աբեղյանին, Հակոբ Մանանդյանին, Լեոյին, Արսեն Տերտերյանին՝ պարզ է դառնում, թե ինչ մակարդակ են ունեցել համալսարանական առաջին գրքերը՝ 1920-ական թվականներին:

Ուշագրավ է, որ հիմնադրման օրերից հրատարակչությունը գործել է անընդմեջ, անգամ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին տպագրել է մեծարժեք գրքեր:

1920-1940-ական թվականներին, մինչև Գիտությունների Ակադեմիայի կազմավորումը Հայաստանի գիտական միտքը կենտրոնացված էր համալսարանում:

Հրատարակչության ամենամեծ հաջողությունը բառարանագրության ասպարեզում է: Այն ունի թե՛ գիտական և թե՛ ուսումնական նշանակություն:

1927թ. սկսվեց հայ լեզվաբանության անկյունաքարերից մեկը կազմող Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» հրատարակչությունը՝ ապակետիպ եղանակով, քանի որ տասնյակ լեզուների տառերը ձուլել այդ տարիներին անհնար էր: Անվանի լեզվաբան Էդ. Աղայանը բառարանը համարում է եզակի երևույթ. «Դա մի իսկական բառարանագիտական հանրագիտարան է: Նա լիակատար ցանկն է հայերեն լեզվի արմատների և արմատական բառերի, նրանց բացատրությամբ, քերականական տեղեկություններով ու ստուգաբանությամբ հանդերձ... դժվար է հավատալ, թե մի մարդ կարող է այդպիսի գործ անել, մանավանդ, երբ դրա հետ միասին բազմաթիվ ուրիշ սովորածավալ գիտական հետազոտություններ է լույս ընծայել»:

«Արմատական բառարանը» բարձր գնահատականի է արժանացել նաև օտար հայագետների՝ Անտոան Մեյեի, Հայրիխ Հյուբշմանի և ուրիշների կողմից:

Բառարանը շարվածքով լույս տեսավ 1970-ական թվականներին ԵՊՀ հրատարակչությունում հինգ սովորածավալ հատորներով:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ծանր տարիներին սկսվեց Աճառյանի մեկ այլ կոթողային աշխատության՝ «Հայոց անձնանունների բառարանի» հրատարակչությունը: Աճառյանն ուսումնասիրել է հայոց լեզվի մեջ գործածված բոլոր անձնանունները՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև XV դարը: Իսկ XV դարից հետո՝ միայն գրականության ու պատմության մեջ նշանավոր անձանց անունները: Այն ևս կազմեց հինգ ծավալուն հատոր:

ԵՊՀ հրատարակչությունում Աճառյանի բառարանագրական գործունեությունը սրանով չի ավարտվում: Հայերենի բարբառներին նվիրված ուսումնասիրությունները (Նոր Նախիջևանի, Մարաղայի, Վանի, Մուսա լեռան, Նոր Հաճրնի, Սվեդիայի, պոլսահայ բարբառների) ունեն ընդարձակ բառարաններ:

Հայ բառարանագրության ասպարեզում կարևոր նվաճում է նաև Թ. Հակոբյանի, Ստ. Մելիք Բախշյանի, Հ. Բարսեղյանի ,Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի

հինգհատորյակի լույսընծայումը: Այն 2002թ. արժանացավ ՀՀ Նախագահի մրցանակին՝ Մարդկության զարգացման և հումանիտական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար:

Հայաստանի տեղանունների առաջին ստուգաբանությունն արել է 5-րդ դարի պատմիչ, պատմահայր Մովսես Խորենացին, այնուհետև 19-րդ շատ նշանավոր հայ գործիչներ՝ Ղևոնդ Ալիշանը, ով եղել է բանաստեղծ, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, Նշան Ճիվանյանը, Համբարձում Առաքելյանը, Մկրտիչ Պոտուրյանը, Սուքիաս Էփրիկյանը և ուրիշներ, անգամ օտար հայագետներ գերմանացի Յոզ. Մարկվարտը, Հայնրիխ Հյուբշմանը ստուգաբանեցին որոշ տեղանուններ, կազմեցին բառարաններ, սակայն ոչ մեկը չկարողացավ ավարտել այն: Հր. Աճառյանն իր ֆենոմենալ գիտելիքներով և առասպելական աշխատասիրությամբ հրաժարվեց նման բառարան ստեղծելու մտքից, որովհետև այն իրականացնելու համար. «սովորական կյանքին պետք է ավելացնել մի քանի տասնյակ տարիներ», գրում է Աճառյանը:

ՀՀ Նախագահի մրցանակի արժանացավ նաև մեկ այլ բառարան, ԵՊՀ վաստակաշատ դասախոս, լեզվաբան Աշոտ Սուքիասյանի, Հայոց լեզվի հումանիշների բացատրական բառարանը: Այն պարունակում է հայերենի արևելահայ և արևմտահայ գրական լեզուների 130 հազար բառ և դարձվածքային միավոր, հումանիշների հետ տրվում են նաև բառերի բացատրությունները:

Բառարանագրության ասպարեզում հայ լեզվաբանության պատմության մեջ Հրաչյա Աճառյանից հետո ամենամեծ վաստակն ունի ԵՊՀ դասախոս, երկար տարիներ Հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, դոկտորպրոֆեսոր Ռուբեն Ղազարյանը՝ Նոր Հայկազյան բառարանի հրատարակությունից 170 տարի անց Ռ. Ղազարյանն էր, որ կազմեց Գրաբարի երկհատոր նոր բառարան, ուր կան շատ լրացումներ: Նույն հեղինակը (Հ. Ավետիսյանի հետ) կազմեց նաև Միջին հայերենի բառարանե, որն ընդգրկում է XII-XVI դարերի ինքնուրույն և թարգմանական երկերում վկայված միջին գրական հայերենի բառերը, ոճերն ու դարձվածքները, որոնք ձևախմբաբանական առումով բնորոշ չեն գրաբարին և ընդհանրապես չեն հանդիպում V-XI դարերի մատենագրության մեջ:

Առաջին անգամ հայ լեզվաբանության պատմությունում Ռ. Ղազարյանն էր, որ ստեղծեց Գրաբարի հումանիշների բառարանե: Հումանիշներ, որոնք գործածություն են գտել հայ մատենագրության V-XI դարերի ինքնուրույն և թարգմանական երկերում:

Ռ. Ղազարյանը հեղինակն է նաև «Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարանի» (երկու հրատարակություն), «Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարանի» (վեց պրակ՝ Կաթնասուններ, Թռչուններ, Սողուններ և երկկենցաղներ, Ձկներ, Միջատներ և Անողնաշարավորներ), «Թուրքերենհայերեն բառարանի և այլն:

Մոտ 25 տարի ԵՊՀ գիտաշխատող, բան. գիտ. դոկտոր Երջանիկ Գևորգյանն աշխատել էր մի շատ ուշագրավ բառարանի վրա: Ի ծնե կույր լինելով Գևորգյանը ստեղծել է «Հայոց շարժումային լեզվի

բացատրական բառարան» (Շարժութարան): Նկարագրված է 650 շարժույթ: Նման բառարաններ ունեն մի քանի ժողովուրդներ՝ անգլիացիները, ռուսները, իտալացիները, հնդիկները: Ի դեպ հայերենը ամենաձավալունն է՝ 700 մեծադիր էջ:

Որքան էլ տարօրինակ է՝ դարեր շարունակ հարևանությամբ ապրելով չէր գրվել վրացերենհայերեն բառարան: Հրատարակչությունը լույս ընծայեց ԵՊՀ շրջանավարտ Ռամազ Գորգաձեի ,Վրացերենհայերեն սովորածավալ բառարանը՝ 716 մեծադիր էջ, ընդգրկում է շուրջ 40 հազար բառահոդված: Կան նաև անձնանունների և տեղանունների ցանկեր:

Հայ բառարանագրության եզակի արժեք է «Ծածկանունների բառարանը»: Բազմավաստակ թատերագետ, բանասեր Բախտիար Հովակիմյանն ավելի քան հիսուն տարի զբաղվել էր «Հայոց ծածկանունների բառարան» ստեղծելու գործով: Մեծ դժվարությամբ վերծանել էր 8 հազար հեղինակի 28 հազար ծածկանուն:

Բառարանագրության ասպարեզում այս նվաճումներին պետք է ավելացնել ԵՊՀ երկարամյա դասախոս, Նելլի Բարաթյանի «Անգլերենհայերեն բառարանը», Արամ Բարլեզիզյանի «Հայերեն-ֆրանսերեն», Ա. Հայրապետյանի «Լատիներեն-հայերեն», Մ. Ամիրբեկյանի և Ք. Զարգարյանի «Հայերեն հնդկերեն (հինդի)», Ն. Մկրտչյանի «Հունարեն-հայերեն» բառարանները:

Այս բոլորին պետք է ավելացնել նաև անգերագանցելի երկու բառարանների վերահրատարակչությունները՝ ,Նոր բառգիրք հայկազեան լեզոիտե, որի 1ին տպագրությունը կատարվել էր Վենետիկում 1836-1837 թթ. (հեղինակներ Գաբրիել Ավետիքյան, Խ. Սուրմելյան և Մկրտիչ Ավգերյան, վերջիններս եղել են Մխիթարյան Միաբանության անդամներ) և Ստեփան Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» չորս հատորները: Վերջինիս վրիպակները շտկվել են և լույս է տեսել տպագրական ֆարձր մակարդակով:

Գիտական ուսումնասիրությունների առումով առաջնությունը՝ հայագիտությանն է: Հայագիտության ասպարեզում վերջին տարիներին հրատարակչության հաջողությունները կապվում են Գ. Կյուլպենկյան հիմնարկության Հայկական բաժանմունքի անվան հետ: Լույս են տեսել մոտ 800 անուն գիրք, որից ավելի քան 150-ը հրատարակել է ԵՊՀ հրատարակչությունը:

Ավարտին հասցվեց Աճառյանի լեզվաբանական մեծագույն ուսումնասիրության՝ ,Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուներից տպագրությունը: Վերջին իններորդ հատորը մեծանուն հայագետը չէր հասցրել ավարտել, այն սևագիր և ձեռագիր վիճակում էր: Հնարավոր եղավ վերծանել ձեռագիրը և հրատարակել վերջին՝ իններորդ հատորը, որն ընդգրկում է շատ կարևոր երեք բաժիններ՝ Իմաստաբանություն, Բառաքնություն, Շարահյուսություն: Հրատարակչության պատրաստմանը օգնեցին ԵՊՀ դասախոսներ, դոկտորապրոֆեսորներ Ս. Գալստյանը և Խ. Բադիկյանը:

Հայագիտության համար հսկայական արժեք ունի ականավոր պատմաբանհայագետ Նիկողայոս Ադոնցի «Երկերի» յոթհատորյակը: Այստեղ ընդգրկված են ինչպես պատմագիտական, այնպես էլ լեզվաբանական, բանասիրական ուսումնասիրություններ: Կան շատ նոր թարգմանություններ՝ ֆրանսերենից, ռուսերենից:

«Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան հայկական մատենաշարով» լույս տեսան օտար հայագետների անտիպ ուսումնասիրությունները: Գերմանացի նշանավոր լեզվաբան Հայնրիխ Հյուբշմանի երկու գրքերը՝ «Հայագիտական ուսումնասիրությունները» (թարգմ. Մ. Ն. Հարությունյան) և «Հայերենի քերականությունը»: Հյուբշմանն առաջինն ապացուցեց, որ հայոց լեզուն պատկանելով հնդեվրոպական ընտանիքին, ներկայանում է իբրև ինքնուրույն, անկախ ճյուղ: Նա նախատեսել էր ստեղծել նաև հայերենի քերականությունը՝ երեք հատորներով, սակայն կարողացավ ավարտել միայն ,Հայերենի ստուգաբանությունը քանի որ մահացավ 59 տրեկանում:

Գերմանացի մեկ այլ նշանավոր հայագետ Յոզեֆ Կարստը գրել և 1901թ. Ստրասբուրգում հրատարակել էր «Կիլիկիայի հայերենի պատմական քերականությունը»: ԵՊՀ գիտաշխատող, ազգությամբ հրեա Դմիտրի Սլիվնյակը գերմաներենից թարգմանել էր հայերեն և մոտ 15 տարի մնացել էր հրատարակչության գործընտրում: Այս կարևոր աշխատությունը լույս տեսավ 2002 թ.: Այն խմբագրեց և հրատարակության պատրաստեց Ռ. Ղազարյանը:

Օտար հեղինակների ուսումնասիրությունների, հատկապես Մեծ եղեռնի թեմային առնչվող գործերի թարգմանությունները և լույս ընծայումը եղել է հրատարակչության կարևոր խնդիրներից:

Ֆրիտյոֆ Նանսենի, այդ նշանավոր գիտնականի, մարդասերի, հայ ժողովրդի մեծ բարեկամի «Խաբված ժողովուրդ» գիրքը մի քանի հրատարակություն էր ունեցել նորվեգերեն, գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն և միայն 2001թ. այն լույս տեսավ հայերեն՝ ԵՊՀ հրատարակչությունում (գերմ թարգմ. Է Մակարյան): Այնուհետև, գերմաներենից թարգմանությամբ լույս տեսան Վ. Բաումի, Յ. Քյունցլերի, Ֆրիբյուխերի եղեռնի թեմայով գրված գործերը:

Պատմագրական ուսումնասիրություններից պետք է առանձնացնել նշանավոր պատմաբան, ակադեմիկոս Հր. Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» բազմահատորյակը, ուր ընդգրկված են թեմայի հետ առնչվող հայ իրականությունում (թե արևելահայ, թե արևմտահայ) կատարված բոլոր կարևոր իրադարձությունների ճշգրիտ նկարագրությունը և վերլուծությունը: 2013 թ. այն արժանացել է ՀՀ պետական մրցանակի:

Ստ. Պողոսյանի ,Հայոց ցեղասպանության պատմությունն եռահատոր ուսումնասիրությունը ներկայացնում է 19 ընդհանուր երկրորդ կեսերից մինչև 191520ական թվականների ողբերգական դեպքերը Արևմտյան Հայաստանում, երբ Օսմանյան կայսրությունն իրականացրեց հայոց ցեղասպանության հրեշավոր ծրագիրը: Օգտագործված է հսկայածավալ փաստական նյութ:

Ազատագրական պայքարի թեմային է առնչվում նաև ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանի «Զանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ.» մենագրությունը: Գարեգին Նժդեհի ակտիվ մասնակցությամբ Սյունիքի ժողովուրդը անձնագոհ պայքարի շնորհիվ կարողացավ գավառը թողնել Հայաստանում՝ ձախողելով այն Ադրբեջանին ենթարկելու բոլոր փորձերը: Այս բարդ իրադարձությունները ներկայացված են պատմագիտական խորը վերլուծությամբ:

Եթե գիտահետազոտական աշխատանքների գծով գերիշխում են հայագիտությունը և հումանիտար գիտությունները, ապա ուսումնական գրականության ասպարեզում մեծ տեղ է տրված բնական գիտություններին: Առաջին գիրքը, որի անվանաթերթին կարդում ենք «Երևանի

ժողովրդական համալսարան, սերիա 1» անվանի ֆիզիկոս, Հովհ. Նավակատիկյանի «Դետերմինատորներ» ուսումնական ձեռնարկն է: Միայն անունների թվարկումը՝ բավական է, պատկերացում կազմելու համար, թե ինչ արժեքավոր ուսումնական գրականություն է լույս տեսել ճշգրիտ գիտությունների գծով՝ Վիկտոր Համբարձումյան, Հար. Անժուր, Վահան Արծրունի, Հովակիմ Բեդեյան: Օտար հեղինակներից միայն 20-ական թվականներին լույս են տեսել Վ. Մրոչեկի, Վ. Գուտմանի, Վ. Մեշչերսկու, Գ. Ֆիխտենգոլցի և ուրիշների դասագրքերը:

Առանձին գնահատանքի են արժանի մատենաշարերի հրատարակությունները: Շատ արժեքավոր գրքեր են լույս տեսել «Ուսանողի գրադարան», «Քրեստոմատիաներ» մատենաշարերում: «Քրեստոմատիաներ» մատենաշարի հրատարակությունը կապվում է հիմնականում ուսումնական ծրագրերի հետ «Հայ ժողովրդի պատմություն», «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծություն», «Հայոց հին և միջնադարյան արձակ» և այլն:

«Ուսանողի գրադարան» մատենաշարով՝ 2030 հազար տպաքանակով լույս տեսան Դանթեի, Շեքսպիրի, Գյոթեի, Շիլլերի երկերը, «Հին Արևելքի պոեզիա», «Ֆրանսիական կլասիցիզմ», «20-րդ դարի արտասահմանյան դրամատուրգիան» ժողովածուները, Աբովյանի, ՄայաթՆովայի և այլ դասական հեղինակների գործերը:

Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը՝ ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի առաջին դեկանը, հիմնեց «Աճեմյան մատենաշարը», այն արդեն լույս է ընծայել երկու տասնյակ գրքեր՝ կրոնական և պատմագիտական թեմաններով:

ԵՊՀ հրատարակչության գործունեությունում առանձնակի տեղ ունեն պարբերական հրատարակությունները:

Գիտության զարգացմանը մեծապես նպաստել են առաջին տարիներից հրատարակվող ամսագրերը, հանդեսները, տարեգրքերը:

Հրատարակչությունը մշտապես մասնակցել է Ֆրանկֆուրտում, Մոսկվայում, ՍանկտՊետերբուրգում, Ժնևում և այլ քաղաքներում կազմակերպված գրքի միջազգային ցուցահանդեստոնավաճառներին:

ԵՊՀ հրատարակչության լույս ընծայած գրքերից շատերը շահել են պատվավոր մրցանակներ:

ԵՊՀ հրատարակչությունը ղեկավարել են Հանրապետության ճանաչված մտավորականներ Վսեվոլոդ Սկաբլովկինը (1957), Արմեն Հակոբյանը (1957-1964), Արամայիս Ասրյանը (1964-1976), Գառնիկ Անանյանը (1976-1985), Բաբկեն Հարությունյանը (1986-1988), Սարգիս Փանոսյանը (1988-1994), Դավիթ Գասպարյանը (1994-1998), Պերճ Ստեփանյան (1998-2014):

Այժմ «ԵՊՀ հրատարակչությունը» ղեկավարում է բանասիրական գիտությունների թեկնածու Կարեն Գրիգորյանը: